ՇԷՔՍՊԻՐ

ՄԱԿԲԵԹ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ[1]

ՀԱՆԴԷՍ ԵՐԲՈՐԴ

ՏԵՍԻԼ Ա

Փորձս։ Սենեակ յապարանս։

Մտանէ Բանքոյ։

Բանքոյ

Աւասիկ դու այժմ թագաւոր ես և կաւդոր և Գլամիս,
Ամենայն ինչ՝ զոր քեզ քորք ճակատագրին խոստացան.
Այլ խիթամ՝ եթէ առ այս խաղացեր խաղ չարաբուեստ։
Բայց ասի ևս թէ սերունդք քո չվայելեսցեն յայդոսիկ.
Այլ թէ ես հայր և նահապետ կացիս բազում արքայից։
Եթէ ստոյգ բարբառեցան, որպէս վրկայ բանքն, ով Մակբեթ,
Որ վասըն քո 'ի գլուխ ելին, հիմ՝ որ 'ի քոյդ մեծութիւն
Եղև պատգամ ճշմարիտ, նոյն և վասն իմ ոչ եղիցի,
Եւ զյոյս իմ հաստատեսցէ։ Այլ, շատ է այս. մի՛ այլ բանք։

Զայն փողոյ։ Մտանեն Մակբեթ թագաւորակերպ և Տիկին Մակբեթ իբրև դշիոյ, Լէնոս, Ռոսսէ, Տեարք, Տիկնայք և Ուղեկիցք։

Մակբեթ

Ահա հիւր մեր բարձերէց։

Տիկին Մակբեթ

Թէ մոռացեալ լինէր դա՝
Պակաս մընայր մեծապէս խընջոյքս, և բնաւն անպատշաճ։

Մակբեթ

Տէր, սեղան մեծահաց առնեմք մեք յայսըմ գիշերի,
Եւ քեզ անդ լինել ըղձամք։

1 Տես Ա. Պրակ, յէջ 68։

digitised by A.R.A.R.@

Բանքոյ

Հրաման տացէ արքայդ իմ,
Բանի քում անլոյծ կապով հնազանդութեան անսացիս միշտ։

Մակբեթ

Ընդ երեկս ելցես 'ի ձի։

Բանքոյ

Այո՛, տէր իմ բարի։

Մակբեթ

Ապ՝ եթէ ոչ՝
Հարցանել կամէաք 'ի քէն խորհուրդ 'ի ժողովիս,
Այն որ միշտ իմաստուն հանդիսացաւ և յաջող։
Այլ հարցցուք 'ի վաղիւ անդր։ Ի հեռաւոր գընաս տեղի։

Բանքոյ

Այնքան, տէր իմ, հեռի՝ մինչև ընթրեացըն հասցէ ժամ։
Եթէ ձին իմ չարչաւիցէ, հարկ լիցի ինձ առնուլ փոխ
Մի և կամ ժամըս երկուս 'ի նսեմաստուեր գիշերոյն։

Մակբեթ

Մի՛ վերջասցիս գալ 'ի խրախուսնն։

Բանքոյ

Ոչ յեսնեցայց, ոչ, տէր իմ։

Մակբեթ

Իմացաք եթէ մի մերս յարիւնարբու համշիրակաց
Անկեալ է 'ի փախուստ յԱնգլիա, միւսն յիռլանտա,
Զհայրասպան ոճիրն առանց ինչ խոստովան լինելոյ.
Եւ չգիտեմ որպիսիս ունկընդրաց յօդեալ զրոյցս։
Այլ խօսեացուք վաղիւ գիրացս, որպէս և զայլ գործոց երկրիս
Որ ստիպեն գումարել մեզ։ Երթ, ելի 'ի ձի. ողջամբ մընա,
Մինչ 'ի դարձ քս ընդ երեկս։ Եւ փլէանդէ գայցէ ընդ քեզ։

digitised by A.R.A.R.@

Բանքոյ

Այ՛, տէր. սակայն ճեպէ ժամանակն, հարկ է մեկնել։

Մակբեթ

Կամիմ զի իցեն քո նըժոյգք ընտիրք և երագունք։
Եւ զհեծեալս իւրեանց յանձն առնեմ նոցին։ Ողջամբ երթ։
(Ելանէ Բանքոյ)։
Ցերեկոյիս յայսմիկ անցնիւր ազատ լիցի՝ ցեօթներորդ ժամ.
Մեք, 'ի գըտանել զընկերութիւնն և ևս զուարթ,
Մինչև ցըժամ ճաշուն կացցուք միասցուք ասա։ Արդ Տէր ընդ ձեզ։
(Ելանեն Տիկին Մակբեթ, Տեարք և Տիկնայք)։
Այլ դու, անսա ինձ. ըսպասէն արքն այնոքիկ հրամանաց։

Սպասաւոր

Առ դըրան ապարանիցըն կան նոքա, տէր։

Մակբեթ

Մոյծ այսրէն։ (Ելանէ Սպասաւորն)։
— Լինել այսպէս, չէ ինչ լինել, եթէ չիցէ յապահովս։
Արհաւիրք Բանքոյի յիս ընդմիտեալ են խորամուխ.
Ի բնութեան իւրում դոյ պերճ իմն ինչ, որ ահ արկանէ։
Ի նա այր քաջայանդուգն, և 'նդ անընդլաճ բուսոյ բարուց
Կըցէ զհանճար՝ որ զզօրութիւն իւր ընդ անքոյթ տանի շաւիղ.
Ի կենաց նորա միայն ևեթ զահի հարկանիմ,
Եւ ոգի իմ սասանի 'ի նորայնոյն միայնոյ,
Զոր օրինակ յԱնտոնիոսէ, ասեն, ոգի կեսարու։
Կըշտամբեաց նա զքորսն, յորժամ զիս թագաւոր կարդացին,
Եւ հրաման ետ խօսել զանձնէն. և անդ նոցին ձայնք դուշակք
Հայր ըզնա հրաչակեցին արքայական ինչ զարմի։
Կապեցին նոքա 'ի գլուխ իմ ըղկրսակ անծրնունդ,
Եւ 'ի ձեռս իմ ետուն գաւազան մ'անբարունամ.
Զոր խլեսցէ ձեռն օտար, և ինձ որդի չյաջորդեսցէ։
Պըղծեցի զհոգիս ուրեմն վասն ազգին Բանքոյի,
Վասըն նորա սպանի ապա զբարեպաշտիկըն Դունկան.
Ի բաժակն իմ անդորրու վասըն նորա խառնեցի
Զմբուր ժանտ ապագային. վասըն նորա, և զի լիցի
Արքունի՝ ճետըն Բանքոյի, հասարակաց թըշնամոյ
Մարդկան զյաւիտենից կենացն իմոց ետու զդարդ։

digitised by A.R.A.R.@

Քան այսմ այսպէս լինել, նա աւանիկ, եկ, ով բախտ,
Ա՛նց ի մէջ, եկ կռուեսցուք մինչև խպառ։ — Ո՞վ է անդ։
(Մտանէ Սպասաւորն ընդ Սրիկայս երկոքեան)։
— կաց մընա առ դրան, մինչև ըզքեզ կոչեցից։ (Ելանէ Սպասաւորն)։
— Մեթե՞ ոչ երէկ զիրացըն խօսեցաք։

Առաջին Սրիկայ

Այո՛, տէր,
երէկ զիրացըն խօսեցաք։

Մակբեթ

Եւ խորհեցայք զոր ասացիս։
Ցիշեցէք, զի նա էր որ զձեզ երբեմըն ճընշեաց,
Եւ ոչ ես բընաւ, զոր դուք համարէիք մեղապարտ.
Քաջ իսկ ի բանըս մեր վերջինըս ցուցի ձեզ յայտնապէս,
Ի՛նչ ըզձեզ խրեաց նա, և քարընդոտան եղև ձեզ.
Ասացի ձեզ ըզդործիսըն զայնոսիկ զորս հնարեաց,
Եւ բազում ինչ այլ իրս, որ կիսամասն իսկ հոգւոյ՝
Ցիմարի ումեք տային ասել. Այդ գործ է Բանքոյի։

Առաջին Սրիկայ

Արդարև ցուցեր մեզ զայդ։

Մակբեթ

Այո՛, ստուգիւ. և արդ գամ
Յառաջի երկրորդ բանակցութեանս։ Իցէք ցայն վայր համբերողք՝
Մինչև ձեզ զայսոսիկ համայն առ ոչ ինչ դրեալ։
Հաւատացէք յաւետարան ցայն վայր՝ մինչ զի աղօթել ձեզ
Վասըն բարւոյ առնըդ և վասն որդւոց իւրոց. վասըն նորա՝
Որոյ ծանրը ձեռք ըզձեզ կորացուցին ի չիրիմ,
Եւ ի մայր դատապարտեաց ըզձերայինսն յաւիտեան։

Առաջին Սրիկայ

Մարդիկ եմք, տէր։

Մակբեթ

Այո՛, իցէք յարարածոց ի կարգի,

digitised by A.R.A.R.@

Գոգ իբրև բարակը և շունք խառնածընունդք և սպանիկանք ,
Գանգրամազք , երկայնավարսք և շընագայք և շընչրիք .
Բնաւք յանուն յորջորջին չան , այլ որք ի ցեղսն են ուժդինք՝
Որոշին , շուն յամրագնաց , շուն երագոտրն , շուն արուոր ,
Պահապանքն բարի և որսականն , իւրաքանչիւր
Ըստ պարգևին՝ զոր բարերարքն բընութիւն ետ նոցա ,
Ցորմէ առնուն անուն զատ յընդհանուր ցեղականէն .
Դոյն և մարդկան . արդ եթէ գուք յընտրեալ ցանկին գիտէք զանձինս ,
Եւ ոչ ի ստորին կարգս իցէք՝ զայն ինձ ասացէք ,
Եւ ես ի սիրտս ձեր արկից խորհուրդ՝ զոր ձեր յանդ հանեալ ,
Ցոսոխէն ձերմէ ջերծջիք , և պընդեսջիք ի սէր մեր .
Ի մեր , որ որչափ կեայն՝ առողջութիւն մեր նուաղեալ
Ոչ երբեք կազդուրեսցի ։

Երկրորդ Սրիկայ

Ամենեքեան ոմն եմ ես , տէր ,
Որ զչարեալ ընդ վատթար ոտնհարութիւնս աշխարհի՝
Ի խընդիր վրիժուց զանձն իմ ի բնաւս յառաջ ընկեցից ։

Առաջին Սրիկայ

Իսկ ես մարդ եմ՝ այնքան նրկուն եղեալ յիմոց աղետից ,
Զբդձբդեալ ի բախտէն , մինչև դընել ինձ ըզկեանս՝
Ցառաջին վտանգս արկածից առ լաւագոյն գործել զայն ,
Կամ ջերծանել յայնմանէ ։

Մակբեթ

Դուք երկոքեանքդ իսկ գիտէք
Զի Բանքոյ հակառակ էր ձեզ ։

Երկրորդ Սրիկայ

Գիտակ եմք , տէր , այնմ։

Մակբեթ

Նա և իմն է . և ի մեզ՝ այնպէս է ոիսն արիւնախանձ՝
Զի մէն մի վայրկեանք կենաց իւրոց խոցէ զիս ընդ ակն ։
Մարթ է ինձ , զիմ զօրութիւն ի գործ արկեալ յայտնապէս ,
Վրեժարել ընդնա յաչացս , և պատճառել ըզկամս իմ .
Այլ չէ ինձ պարտ առնել զայն , ակն ածեալ ի մտերմացն ,

digitised by A.R.A.R.@

Որք են և իմ, և զսիրով նոցին չկարեմ զանց առնել,
Եւ ընդ որս՝ հարկ լիցի ինձ ողբալ զդաւեալն առ յինէն։
Այս իսկ է ահա, որ զձեր տայ ինձ խընդրել ձեռն ի նպաստ,
Ի պատճառս ծածկելոյ գործ մի, յորում հարկ է ինձ
Վասն բազում ինչ պատճառաց, զայս աշխարհի խարդախել։

Երկրորդ Սրիկայ

Արասցուք, տէր, զամենայն՝ զոր ինչ դու մեզ պատուիրեացես։

Առաջին Սրիկայ

Այո, պարտին կեանք մեր...

Մակբեր

Փայլէ կորովդ յերեսս իսկ ձեր։
Ցեսս մի ժամու ցուցից զտեղին յոր պարտ է ձեզ դարանել.
Զեկուցից ըզժամն, յորում լրտեսեսցիք, և զվայրկեան։
Ցերեկոյիս յայսմիկ լիցի, և սուղ հեռի յարքունեացն.
Եւ միտ դիք քաջ, զի մի ստգիւտ ինչ վասն իրացդ անկցի զինն։
Եւ զի մի կրճիմն ինչ և պատառուած լից՝ ի գործն,
Եւ որդին իւր Փլէանդէ, որ ընկերէն ընդ նըմա,
Եւ յորմէ ճողոպրելոյն չէ փոքր ինչ քան ի հօրէն,
Հաղորդակից լիցի բաղդի խաւարչուտ այնըր ժամու։
Խորհեսջիք ուրոյն՝ արդեաք իցէք ի միտս հաստատունս.
Ի մնալոյ դամ առ ձեզ։

Երկրորդ Սրիկայ

Տէր, անյողդողդ եմք յայս կամն։

Մակբեր

Կոչեցից ըզձեզ ընդհուպ, կացէք մնացէք յապարանս։ (Ելանեն Սրիկայք)։
Աւասիկ վրճարեցաւ։ Եթէ հոգի քո, Բանքոյ,
Ցերկինս ի վեր ունի սլանալ, յերեկոյիս լիցի այն։

digitised by A.R.A.R.@

ՏԵՍԻԼ Բ

Այլ Սեւեակ յապարանս։

Մտանեն Տիկին Մակբեթ և Սպասաւոր ոք։

Տիկին Մակբեթ

Բանքոյ Եկ յապարանիցս։

Սպասաւոր

Այո՛, տիկին, այլ անդրէն
Եկեսցէ յերեկոյիս։

Տիկին Մակբեթ

Ասա ցարքայ, թէ հաճեսցի,
Զի եկեալ եմ ասել բանս ինչ նրմա։

Սպասաւոր

Երթամ բամբիշն։ (ելանէ)։

Տիկին Մակբեթ

Ոչ ինչ ոչ շահի ոք, ընդվայր ծախէ զամենայն՝
Ցորժամ ելցէ փափագն ի գլուխ առանց ինչ դոհ լինելոյ։
Լաւագոյն ևս էր լինել ի պայմանի կործանելոյն,
Քան թէ նորայն կործանմամբ կեալ յանհանգիստ լրջմտութեան։
(Մտանէ Մակբեթ)։

Զի՞ է քեզ, տէր իմ. առ ինչ կաս առանձին միայնակ,
Քեզ զովողս արարեալ ըղմահագոյժ ուրուականս,
Ցածելով ի խորհուրդս որոց պարտ էր մեռանել
Ընդ պատճառաց նոցին։ Զէ պարտ զանհրնարիսյն խոկալ.
Եղև, որ ինչ եղևն։

Մակբեթ

Զօձն թեթևաբս հարաք,
Բայց սակայն ըսպանաք ոչ։ Մասունք նորին կրցեսցին.

digitised by A.R.A.R.@

Ընթերի դարձցի անդրէն, և չարութիւն մեր վերհերոտ
Անկցի ի խայթուածս իւրոց նախկին ատամանցն։ —
Այլ, ծն և ծն, տիեզերացըս խաստեսցին հրաշակերտք,
Նեղեսցին կըրկին աշխարհքըն, քան թէ բնաւ երբեք կերայց
Եռ ահիւ, կամ յարհաւիրըս երազոց նիրհեցից՝
Որ զդիշերս ամենայն առնեն ըզմեզ ահաբեկ։
Առաւել յոյժ լաւագոյն էր մեզ նընջել ընդ մեռելոյն
Զոր մեզէն յուղարկեցաք ի բնակարանն հանգըստեան՝
Զի հասցուք ուր արդ կամքըս, քան տանջիլ զոր հանապազ
Ցանհնարին վիշտս անձկութեանց։ Ցիւրում չիրմի կայ Դունկան.
Դադարէ նա՝ յետ ջերման կենացն՝ ի քուն քաղցրութեան.
Չչարագոյնըն զոր կարէր առնել՝ արար մատնութիւն.
Ոչ թոյն, ոչ երկաթ, ոչ առտընին թըշնամիք,
Ոչ օտար զէնք, յայսմհետէ մարթին նըմա ատնանել ինչ։

Տիկին Մակբեթ

Երթիցուք, քաղցրը տէր իմ, պարզեա զկընճիռն երեսաց քոց.
Լեր պայծառ և զուարթալից ի բազմականն յերեկոյիս։

Մակբեթ

Եղէց այնպէս, ով սէր իմ. նոյնպէս և դու աղաչեմ։
Մեծապէս հոգ յանձին կալցիս և փոյթ զբանքոյէ.
Նախապատիւ ընծա ցուցցեն աչք քո և բանք՝ կոչնականին։
Ոչ ելցուք յանդորր համբուն՝ ցորչափ ի յուղխ շղոմութեան
Լըսանամք ըզփառըս մեր, և պատրաստս արկանեմք
Զսըրտիւք մերովք՝ ըզդէմս մեր։

Տիկին Մակբեթ

Հարկ է թողուլ քեզ զայն ի բաց։

Մակբեթ

Ո՛հ, կին իմ սիրելի, լի է կարճաք հոգի իմ.
Գիտես զի կեայ դեռ բանքոյ և որդին իւր Ֆլէանդէ։

Տիկին Մակբեթ

Սակայն չէ յաւէրժական պատկեր բնութեան ի նոսա։

digitised by A.R.A.R.@

Մակբեթ

Այ՛ , են և այդ սփոփանք , զի չեն նոքա բնաւ անվրկանդք ։
Արդ ուրախ լեր . նախ քան ջրղկանքն դադարել ի թըռչանաց
Ջորմովք վանացքն , նախ քան սևաթորմին Հեկատեայ
Ըզբընդեռնքն կարդալ՝ զ'ի թեփոտ թևս իւր ճախր առեալ
Ֆրնաբեր բըզզալովքն տացէ նշան յօրանջից
Գիշերոյ , ի գլուխ ելցէ գործ մի ահեղ սոսկալի ։

Տիկին Մակբեթ

Զինչ լիցի ։

Մակբեթ

Սիրտ սիրելի , կաց դու անմեղ ի խորհուրդս ,
Մինչև ի պահն յորում հարցես ծափս յելանել գործոյն յանդ ։
Ե՛կ , գիշեր աղջամըղջին , աքօղեա զտրմոյն աչս տուընջեան ,
Ի՛անտես ձեռամբդ և արիւնոտ պատառեա զկապքն վերջին՝
Որ ըզդէմս իմ այլայլէ ։ Մըթադնի լոյն , և ագռաւք
Դէպ յանտառն , ուր բոյնք իւրեանց են , բաղխեն զթևս սաւառնաձայն ։
Բարեշունչ ազդմունք տուընջեան ի նուաղել կան և ի թմբրիլ .
Մինչ յապուռ իւրեանց դառոթեն սեաւ պաշտօնեայք գիշերոյ ։
Դու ընդ բանս իմ յափշութիւն կըրթիս , այլ կաց խաղաղիկ .
Որ չարիս ըսկըսան իրք՝ չարեաք առցեն հաստատութիւն ։
Ե՛կ ընդ իս , աղաչեմ զքեզ ։ (Երևանեն) ։

ՏԵՍԻԼ Գ

Նոյն ։ Աքոտատեղի կամ մակաղատեղ ցանկապատ , դրամբ միով որ հանեն յապարանսն ։

Մտանեն երեք Սրիկայք ։

Առաջին Սրիկայ

Ո՞ տասց քեզ յարիլ ընդ մեզ ։

Երրորդ Սրիկայ

Մակբեթ ։

digitised by A.R.A.R.@

Երկրորդ Սրիկայ

Զրկայր պատճառք Նրմա ընդ մեզ կասկածելոյ,
Քանզի նա ինքնին ուսոյց և պատուիրեաց մի 'ստ միոջէ
Զոր արժան էր մեզ առնել։

Առաջին Սրիկայ

Ուրեմն ընդ մեզ կաց մինա։
Յոլք ինչ տուընջեան արձակեն դեռ ճաճանչս աղօտ յարևմուտս։
Ժամ է այս, յոր ուղևորն անազանեալ, մըտրակէ
Ձերիվարն իւր ի դէպ պահու իջևանել ի պանդոկ։
Զէ հեռի նա որում մինամք մեք ըսպասեալ աստանօր։

Երրորդ Սրիկայ

Անսացէք. դրընդիւն ձիոց։

Բանքոյ (ի ներքուստ)։

Այր դու, աղէ, լոյս մատոյ։

Երկրորդ Սրիկայ

Նա ինքն իցէ, զի ամենայն այլ հրաւիրեալքն են յապարանս։

Առաջին Սրիկայ

Տարեալ լինին երիվարք իւր։

Երրորդ Սրիկայ

Գոգ մշնաւ չափ աստ' ի բաց։
Այլ սակայն սովոր է նա, որպէս առնեն ամենեքին,
Հետիոտս ըզգընալ աստուստ ցըդուեն ապարանիցն։
(Մտանեն Բանքոյ և Փլեանդէ. Սպասաւոր ոք յառաջէ ջահիւ)։

Երկրորդ Սրիկայ

Ջահ մի, ջահ։

Երրորդ Սրիկայ

Նա ինքնին է։

digitised by A.R.A.R.@

Առաջին Սրիկայ

Աղէ պինդ արձանասցուք։

Բանքոյ

Տեղասցէ անձրև յայսրմ գիշերի։

Առաջին Սրիկայ

Թող տեղասցէ։ (Հարկանէ զԲանքոյ)։

Բանքոյ

Ո՛հ, մատնութիւն. փախիր, սիրուն Փլէանդէ, խոյս տուր, փախիր, Յաւուր միում կարասցես վրէժ պահանջել։ — Ա՛յ անօրէն։
(Մեռանի։ — Ճողոպրին Փլէանդէ և Ցպասաւորն)։

Երրորդ Սրիկայ

Ո՞ զնրագն անցոյց։

Առաջին Սրիկայ

Զէր այն ի դէպ։

Երրորդ Սրիկայ

Մին լոկ անկաւ, զերծաւ որդին։

Երկրորդ Սրիկայ

Վրիպեցաք ի գեղեցիկ կիսամանէ գործոյս մերոյ։

Առաջին Սրիկայ

Բայց և այնպէս երթիցուք ասել զոր ինչ արարաք։

digitised by A.R.A.R.@

ՏԵՍԻԼ Դ

Սրահ փառաւոր յատակաբանս։ — Սեղան կազմեալ։

Մտանեն Մակբեթ, Տիկին Մակբեթ, Ռոսսէ, Լենոս և Ռէնկիցք։

Մակբեթ

Իւրաքանչիւր ոք ճանաչէ զիւր բազմական. բազմեցէք.
Ցառաջնոյ անտի ցվերջինն ողջամբ լիցի գալուստ ձեր։

Տեսարք

Շնորհ ունիմք, տեառն արքայի։

Մակբեթ

Իբրև ցածուն հիւրընկալս՝
Մըտանել յընկերութիւն ձեր կամ է մեզ և զուարճանալ։
Վանատուր տիկինդն մեր ունի զգրլուխ բազմականին.
Խընդրեսցուք այժմ ի նմանէ մատուցանել զողջոյն իւր։

Տիկին Մակբեթ

Համբէն բարեկամաց մերոց մատո զայն ընդ իմ, տէր։
Վկայէ սիրտ իմ թէ ողջամբ եկեալ են այսր ամենեքին։
(Մտանէ Առաջին Սրիկայն. կայ մնայ առ դրան)։

Մակբեթ

Տես զի՝ սոքա քեզ ի խորոց սրտից իւրեանց ունին շնորհս։ —
Յերկոցունց կողմանց սեղանքն բոլորեալ է լիապէս.
Ըզմիջին տեղին կալայց ես. հրճուեսցուք բերկրանօք.
Ընդ հուպ բաժակն ակրմբին ձեռն ի ձեռանէ յածեսցի։
(Առ Սրիկայն) Նիշ արեան դոյ յերեսաս քո։

Սրիկայ

Քաջ է, արիւն է բանքոյի։

digitised by A.R.A.R.@

Մակրեր

Լաւ ես է քեզ ի սրահէս արտաքս կալ քան մնալ ի ներքս։
Զրաւեցեր ըզնա։

Սրիկայ

Այո՛, տէր. ընդ կառափն հանաւ նըմա.
Ես ինքնին արարի զայն։

Մակրեր

Ճարտարագոյն ես փողոտչաց.
Այլ չելցէ անվարձ և նա՝ որ զնոյն արար ընդ փլէանդէ.
Եւ եթէ դու զայն արարեր՝ ապա չիք ոչ քեզ նըմանակ։

Սրիկայ

Ով տէր իմ արքայաշուք, փախըստեայ ՇՆացս Փլէանդէ։

Մակրեր

Ցենոն իմ յիս վերադառնայ. բաց յայդմանէ չիք յիս պակաս.
Անվրթար եմ իբրև ըզվէմ, իբր ապառաժ հաստատուն.
Լայնատարը և սփիւռ որպէս զոգըն՝ որ զիս պարուրէ.
Այլ զարդիս զընդանարդել ի բանտ արկեալ և նրկուն,
Ընդ դըժպըհի խէթս իմ անդրէն և 'նդ արհաւիրըս կաշկանդեալ։ —
Այլ ինձս աներկեան ի Բանքոյէ։

Սրիկայ

Այո՛, տէր իմ.
Ի փոսի միւսմ նընկէ նա, քըսան լայն վիրաք ի գլուխն,
Ցորոց և փոքրն իսկ՝ մահ ածէր։

Մակրեր

Շնորհ ունիմ ձեզ զայսմանէ։ —
Օձըն վիշապ ջախջախեալ կայ. այն որ զերծաւն ի ձէնջ որդն՝
Անպիսի է բնութեամբ՝ զի անանիցի և նա թունիւք,
Թէ և ատամն արդ չունիցի։ Նրթ, վաղիւ լուայց քեզ դարձեալ։

digitised by A.R.A.R.@

Տիկին Մակբեթ

Տէր իմ արքայ, ոչ ինչ է քեզ փոյթ խրախ առնել զխընջոյս մեր.
վաճառել է զսեղանն, թէ կոչնատէրն հանապազ
ոչ անձամբ վըկայեսցէ, եթէ տայն զայն յառաստ սըրտէ։
Ընդում ուտել կամ է ևեթ, լաւ ևս յիւրում տան ուտել.
Բաց այսր՝ բարը բարեմոյնք քաջ հանդերձանք են խորտկաց.
Ապանց այնր՝ երախանք թափուր և մերկ գըտանին։

Մակբեթ

Քաղցր յուշարար. քաջ ախորժակ, ապա քեզ դիւր մարսողութիւն.
Եւ առոյգ առողջութիւն ընդ երկոցունց ընկերեսցէ։

Լենոս

Վեհափառ տեառն արքայի մերոյ իցէ հաճոյ բազմել։
(Երևի Ոգի Բանքոյի, և բազմի ի տեղւոջ Մակբեթի)։

Մակբեթ

Էր մեզ ունել ընդ յարկաւս ըզպանծալին երկրին մերոյ
Եթէ գոյր խրախճանակից մեզ Ընորհաշուքն Բանքոյ։
Կամիմ յաւէտ ըզթերութիւն սիրոյ ի նմա կըշտամբել,
Քան իբր յաղէտս վրտանգաց ինչ ըմբըռնեալ՝ ողբալ ըզնա։

Ռոսսէ

Տէր արքայ, չըգալ նորին զխոստումն իւր ստգրտանէ։
Տէրութիւն քո ոչ պատուեսցէ ըզմեզ պայծառ ընկերութեամբ։

Մակբեթ

Թոլորեալ է սեղանն։

Լենոս

Այլ գոյ անդ, տէր, բարձ մի պահեալ։

Մակբեթ

Եւ ուր։

digitised by A.R.A.R.@

Լէնոս

Ասա, տէր իմ։ Ո՞ զքեզ այդպէս առնէ ահաբեկ։

Մակբեր

Ո՞ ի ճէնչ արար զայդ։

Տեարք

Զինչ արդեօք, տէր իմ բարի։

Մակբեր

Զէ՛ քեզ մարթ ասել երբէք եթէ ես զայդ գործեցի.
Մի՛ այդպէս մի՛ զարիւնացայտ քո վարսս յերեսս իմ թօթափես։

Դոռսէ

Տեարք, ելէք ի սեղանոյն, ախտացեալ իմն է արքայն։

Տիկին Մակբեր

Ո՛չ, նըստէք, ով բարեկամք դուք պատուականք, բազում անգամ
Գատահէ այդ տեառն իմում՝ յաստեաց անտի մանկութեանն.
Աղաչեմ ըզձեզ, նըստէք. վաղանցուկ է ջերմն հասեալ,
Եւ սակաւ մի և ահա փարատեսցի ախտն ի նմանէ,
Եթէ ուշի ուշով հայիք ի դա, ի խոր խոցէք դուք՝
Եւ չար ի չարն յաւելուք. կերպայք և մի՛ ինչ հոգայք։
(Առ Մակբեր) Իցես դու մարդ։

Մակբեր

Այո՛, նա և այնքան քաջասիրտ
Մինչև ժըպարհել ակնարկել յայն որ և զգեան իսկ պակուսցէ։

Տիկին Մակբեր

Որպիսի բաղաղանք. են նոյն ցընորք արհաւրաց քոց.
Է դաշոյնն այն չոգացեալ յօդս, որ ըստ քո իսկ ասից,
Առ Դունկան տանէր ըզքեզ։ Ո՛հ, զիարդ տենդս յանկարծադէպ,
Մարսուռս այս, խաբէութիւն իսկական երկիւղի,
Գան ի ճահ գոեհիկ կընոջ զրուցաց առ հրով՝ որ ի հանոյն

digitised by A.R.A.R.@

Լըւեալ պատմէ։ Քանի ամսի։ Ընդէր ըզդէմքդ այլայլես։
Եթէ յանդ եկ ամենայն, զի է քեզ յաթոռ անդր յառել։

Մակրեր

Աղաչեմ ըզքեզ, հայեաց անդանօր. տես. զինչ խօսիս։ —
Զի փոյթ է ինձ։ — Եթէ կարես գըլխովդ առնել ակնարկի,
Ապա խօսեաց։ Եթէ շիրիմք և դամբարանք յղեն առ մեզ
Զորս թաղեցաք, ապա լիցին խայծիք ցընոց տապանք մեր։
(Ներևոյթ լինի Ոգին)։

Տիկին Մակրեր

Աւաղ. յիմարութիւն ի քէն կապտէ զմարդկութիւն։

Մակրեր

Եթէ ստոյգ իցէ զի կամ ես աստանօր, տեսի զայն։

Տիկին Մակրեր

Վա՛յ. քանի՞ ամսի։

Մակրեր

Ոչ սոսկ այսօր եթէ հեղաւ արիւն,
Այլ անդըստին ի կարի վաղ ժամանակս հեղաւ արիւն,
Մինչ չև մարդկան օրինօք ըղկեանս իւրեանց կանոնեալ էր։
Այո՛, և յետ այնորիկ ըսպանութիւնք գործեցան,
Կարի իմն ահագինք ի բան ճառից յառնկըն մարդկան.
Էր երբեմն, զ'ի Չափշախել անդ ըղկառափըն մարդոյ,
Մեռանէր այրն, և ամենայնն առնոյր վախճան. այլ այժմիկ
Յառնեն մեռեալք մահացու քըսան վիրօքն ի գլուխս իւրեանց,
Եւ ի բարձից բազմականաց մերոց ի բաց վտարեն ըզմեզ։
Նորանչան ևս է այս՝ քան զայնպիսի սպանութիւն։

Տիկին Մակրեր

Տէր իմ՝, աղնըւական կոչնականք քո սպասեն քեզ։

Մակրեր

Ո՛հ, մոռացայ... մի հոգայք ինչ դուք զինէն, ո՛ բարեկամք.
Ախտանամ ախտ՝ որ ոչ ինչ է յայս իմոց ծանօթից։
Հապա, ամենեցուն առողջութիւն և սէր մաղթեմ.

digitised by A.R.A.R.@

Նրստայց և ես։ Ցուք ինձ գինի, զնրւածն իմ լրցեալ։
Ըմպեմ ի բերկրանս բաղմականաց բոլորեցուն, (Ցերևան գայ Ոգին)։
Եւ մերոյ սիրայորդոր բարեկամին Բանքոյի,
Որ աստ մեզ պակասէ. իցէ՞ թէ գոյր աստանօր.
Արբցուք յարև բնաւից և յիւր. ամենեքին ամենեցուն։

Տեսարք

Եւ մեք ընդոյն բաժակ մեծարանօք մաղթեմք քեզ։

Մակրեր

Ի բաց գընա յաչաց իմոց. Երթ էլ ի խորըս երկրի.
Ցամաքեալ են ոսկերք քո, և արիւն քո ցրրտահար.
Չիք յաչըս քո հայեցուած՝ որով պըշնուս յիմ վերայ։

Տիկին Մակրեր

Ով տեարք, մի առնէք պէտ, սովոր է նմա ախտըս այս,
Ոչինչ է այդ. այլ աւաղ, զի եղծանէ զհրրճուանս տոնիս։

Մակրեր

Ցամենայն՝ յոր խիղախէ մարդ ոք, և ես խիղախեմ։
Մօտ մատիր ընդ մոլեգին տեսլեամբ արքունի Ռուսիոյ,
Զինազգեաց ուրնգեղջեր և կամ վագեր վրրկանեան.
Բաց յայսմանէ՝ առ զամենայն տեսիլ, և ոչ սարսեցից։
Կամ դարձիր անդրէն ի կեանս, և սրրով.քով՝ յանապատի
Գումարեաց ընդ իս, և ես եթէ խոյս տաց յերեսաց քոց,
Ապա կարդա զիս աղջկան մի տրղայոյ պաճուճակ։ —
Ի բաց գնա, ոգի ահեղ։ (Անհետոյր լինի Ոգին)։ Պատրանք սնոտեաց, օն ի բաց։ —
Քաջ է. այն ինչ անեղևոյթ լինի նա, ես դառնամ յայր։
Աղաչեմ, հանդարտ լերուք։

Տիկին Մակրեր։

Եղծեր դու զյընծութիւնն,
Եւ զամենայն հրրճուանս աղնիւ բարեկամաց ակըմբիս՝
Այդպիսի անկարգ յուզմամբ՝ որ ափչեցոյց զամենեսին։

Մակրեր

Մարթ ինչ իցէ զի այսպիսիք հասցեն և գրոհ տացեն ի մեզ,
Իբրև զամպս ամարայնի, և չազդեսցեն ինչ մեզ զարմանս։

digitised by A.R.A.R.@

Այլ յաւելուք դուք ի զարմանսն յոր ըմբռնեալ զիս ասեմ,
Ի տեսանելն իմ զայսքս ձեր յայս տեսիլ ոչ ինչ այլայլեալ,
Որ զիմս յարհաւրացն այլագունէ։

Ռոսսէ

Չինչ տեսիլ, տէր։

Տիկին Մակբեթ

Աղաչեմ ըզձեզ, մի բնաւ բարբառիցիք ընդ Նըմա.
Զայրանան կիրք Նորա. հարցուածք առնեն զնա այլ յայլմէ։
Բարի գիշեր ամենեցուն. մի զկարգն հոգայք ի գնալ ձերում,
Այլ ելէք միահաղոյն։

Լէնոս

Բարի գիշեր տեառն արքայի
Եւ լաւագոյն առողջութիւն։

Տիկին Մակբեթ

Գիշեր բարի ամենեցուն։ (Ելանեն Տեարք և Ուղեկիցք նոցա)։

Մակբեթ

Սպասէ նա արեան. ասեն, եթէ արիւն՝ զարիւն խընդրէ։
Տեսաւ շարժել քարանց և արձակել ծառոց բարբառ։
Գուշակութիւնք և յայտնութիւնք, կաչաղակաց կռիւք՝ ազգաւուց
Ցերևան հանին և զընաւ գաղտնագործըն մարդասպան։ —
Ո՞ր պահ է գիշերոյ։

Տիկին Մակբեթ

Է ժամ՝ յորում չիք խըտրել
Արդեաք գիշեր է եթէ տիւ։

Մակբեթ

Չինչ ասես դու զՄակդուփայ,
Որ հրամանաց մերոց չանսաց։

Տիկին Մակբեթ

Դու կոչեցեր ըզնա, տէր։

digitised by A.R.A.R.@

Մակբեթ

Ոչ, այլուստ գիտացի, այլ յըղեցից ըզնըմանէ։
Զիք ի նոսա ոք առ որ չիցեն իմ ալք կաշառեալք։
Վաղիւ վաղ քաջ ընդ առաւօտն երթայց ի գիւտ քերց բախտին.
Ցաց նոցա խօսել դարձեալ. զի արդ եդեալ եմ ի մտի
Զարաչար հնարիւք ըզչարըն ճանաչել. առ իմ օգուտ՝
Ոմենայն տացէ տեղի. ցայն վայր յառաջ գնացի յարեան՝
Զի թէ չերթայց անդրագոյն ևրս, դըժուարին ևս է 'նկըրկիլն
Քան զնըկըրտելըն յառաջ։ Ծառրոտիս յանձին ըզգամ,
Որ կամին ի գլխոյս ի ձեռըս իմ անցանել,
Եւ զոր հարկ է կատարել մինչև ըզնոյնըս քընեալ։

Տիկին Մակբեթ

Պէտս ունիս գու. քընոյ որ նորոգէ զընաւ արարածս։

Մակբեթ

Այո՛, գնացուք ի նինջ։ իմ այս օտար մոռացութիւն
Անձին իմոյ, յանընդել զարհուրանաց պատահէ.
Հարկ է նմա անցանել ընդ այս փորձանս դըժուարին։
Նորավարժք ոմանք եմք դեռ տակաւին մեք ի գործ։ (Ելանեն)։

ՏԵՍԻԼ Ե

Թառատք։ Ամոռոմն։

Մտանէ Հեկատէ. երեք վհուկք ելանեն առաջի նորա։

Առաջին վհուկ

Զի՞ է քեզ, Հեկատէ, սըրտմըտեալ իմն երևիս։

Հեկատէ

Եւ իմ չիցեն առ այդ պատճառք, աւսարդք ժրպիրքք և յանդգունք.
Զիարդ ընդ Մակբեթի իշխէք լինել հաղորդակից,
Եւ առնուլ և տալ զպատգամն իմ և զմահու ազանդիս.
Եւ զիս, ըզտիկինս հմայից ձերոց և ըզբուիչ
Ոմենայն մրթին չարեաց, ոչ կուրացէք ունել զիմ մասն

digitised by A.R.A.R.@

Ող ի լոյս ածել ըզփառս հնարից մերոյ արուեստին։
Եւ որ չար ես է, վասն վէս որդւոյ զբընաւսդ արարէք,
Ոխերմի և կատաղւոյ, որ զձեզ սիրէ որպէս և զոյլս,
Վասն ուշոյ նըզատակի իւրոյ՝ և ոչ վասն ձեր։
Այլ այժմիկ դարման տարէք ինքեանդ. վաղիւ ընդ առաւօտն
Ի խոռոչն Ախերոնի գըտցիք ընդ իս միաբան,
Ուր գայցէ նա իրազգած լինել իւրոյ ճակատագրին։
Կազմեցէք զանօթքս ձեր, և ըզբարբառս դիւթականս,
Ըվհրմայս և զամենայն յուռութուլունս ըստ օրինի։
Ելանեմ ես յօդս ի վեր. և կամ է ինձ ըզգիշերս այս
Ի լրումն ահաւոր ինչ խորհրդոյ ի վար առնուլ.
Գործ մի մնայ կատարել յառաջ քան զօր հասարակ։
Ի ծագս անդ մահիկեղջեր լուսնոյն կախեալ կայ չիթ մի
Միգատարքը գոլոչւոյ՝ ժողովեցից ես զայն յառաջ
Քան ըզտեղալն ի յերկիր, և կաթիլն այն կայլակեալ
Կախարդանաք, յանդիման ածցէ ոգիս երևակերպս,
Որոց ցընորք ճեպեսցեն ըզկործանումն նորա։
Անարգեսցէ նա ըզրախան, և մահու ունչս արասցէ։
Ըզյոյս իւր վհհագոյն համարեսցի քան զհանճար,
Քան զերկիւղ, քան զուղղութիւն. և դուք գիտէք ամենեքին
Զի մահացուաց՝ վըստահութիւնն է մեծագոյն թըշնամի։

(Երգ ի ներքոռատ)։ Օ՛ն արի եկ, ժն, արի եկ։

Լուարուք. ձայնէ զիս ոգի մի փոքրիկ, նըստեալ աւադիկ
Ցամաք խաւարակուռ և ստուար, և ինձ ըսպասէ։ (Ելանէ)։

Առաջին վհուկ

Երթիցուք, ժն, ճեպեսցուք, անդրէն նա դարձ արասցէ։ (Ելանեն վհուկք)։

digitised by A.R.A.R.@

ՏԵՍԻԼ Զ

Փորձս։ — Սեմնակ յապարանս։

Մտանեն Լէնոս և Ազնուական ոմն։

Լէնոս

Առաջին բանք իմ ի ճահ պատահեցին խորհրդոց քոց,
Որոց մարթ է արդ ձրգտել ի խորագոյն մեկնութիւնս։
Ցաւելից քեզ զայս միայն՝ զի նորագանչ իրք դիպեցան.
Զբարին Դունկան ելաց Մակբեթ, մինչ մեռեալ էր բարին Դունկան։
Անագան ուրեմքն ել ի ճեմ բանքոյ աննենդն և քաջ.
Հաճիցիք թերևս ասել թէ սպան ըզնա փլէանդէ.
Զի փախեաւ նա. չէ բարւոք տարաժամու ճեմ առնուլ։
Ո՞վ ոչ տեսանէ քանի ոճիր այլանդակ էր
Դոնալբանայ և Մալկոլմի սպանանել զքաղցր հայր իւրեանց.
Գարշելի գործ. քանիցն Մակբեթ ընդ այն թախծեցաւ։
Ի գթասէր սրտմտութեան իւրում՝ ո՞չ նա զչուառսքն կըրկին
Ըզգերիսքն զինուոյ և քնոյ՝ հարեալ սատակեաց.
Չէր այդ գործ աղնըւական. այո՛, և գործ իմաստուն։
Քանզի ո՞ր այն սիրտ մարդկան որ ոչ խոցէր կարեվէր
Ի լուր ուրացութեան ապիրատիցն ըզմեղս իւրեանց։
Մակբեթ, կըրկնեմ զայն, քաջիկ գործեաց զամենայն.
Եւ թէ էր նըմա զբըռամբ ածել զորդիս Դունկանայ,
(Ցոր ոչ բնաւ հասանիցէ, եթէ Աստուած հաճեսցի),
Ուսանէին արդեօք՝ զինչ իցէ ի մահ վարել ըզհայր.
Զնոյն ըզդայր և փլէանդէ։ Բաւ է. բանք ինչ բարձր հընչեցեալք,
Եւ մանաւանդ հրաժեշտ գնալոյ բըռնաւորին ի սեղան,
Ի վերայ հասոյց ասեն զթըշուառութիւն Մակդուփայ։
Մարթ իցէ քեզ ասել, տէր, թէ ո՞ւր իցէ նա գնացեալ։

Ազնուականն

Որդին Դունկանայ, յորմէ եհան բըռնակալս այս
Զիրաւունքս տոհմին, կեայ յարքունիս Անգղիոյ.
Ուր ընկալեալ եղև այնքան սիրով ի գթածն եդուարդայ,
Մինչև ոչ զըրկիլ նըմա, ի յարկածս անդ իւրոյ բախտին,
Եւ ի դոյզն ինչ պատուոյ և յարժանի մեծարանաց։
Անդըր չոգաւ Մակդուփ՝ աղերս արկանել տուրք արքային՝

digitised by A.R.A.R.@

Զնորտբերլանդայն դրրդել սեպուհ, և զնաղմարարրն Սիւարդ,
Որպէս զի աշակցութեամբ արի արանցս այսոցիկ, —
Եւ այնմ որ էն յերկինքս, նուիրական առնել ըզգործն, —
Ցանդորրու զհաց մեր կերիցուք և նընչեսցուք գիշերի,
Ի բացեայ ի սուսերաց որ ըզիրախուռնս մեր արիւնեն.
Մատուցանել անկեղծ յարդանս, և ընդունել պատիւ ազատ,
Զամենայն միանգամայն, որոց վասն այժմ յոգւոց հանեմք։
Ընդ այս լուր՝ ազգային բրրդեալ ի մեծ բարկութիւն,
Զեռնամուխ եղև այժմէն կազմել ի մարտ պատերազմի։

Լևոն

Եւ յրղեաց ըզՄակդուփայ։

Ազնուականն

Այո, յրղեաց ըզնրմանէ։
Համարձակ պատասխանի արար Մակդուփ. «Ոչ բընաւ, տէր».
Ապա գրժդմեալ դեսպանին՝ նրմա զթիկունքս դարձոյց,
Բանքս ինչ չշշինչելով, որպէս եթէ ասել զայս.
«Մտրրվացիս դու 'նդ ժամն, յոր զիս վարանեցեր պատասխանեաւդ»։

Լևոն

Խրատեսցէ այս ըզՄակդուփ ըզդոյշ լինել անձին իւրոյ,
Եւ ուշիւ մեկուսի կալ։ Ո՛ տայր երկնից հրեշտակի
Թրուչել յարքունիս անդր Անգղիոյ, և ազդ առնել
Զնորա պատգամսըն յառաջ քան ըզհասանել իսկ նորին,
Զի վաղագոյն հասցեն բարիք եղկելի մերս հայրենեաց՝
Որ 'նդ անիծեալ ձեռամբ հեծէ։

Ազնուականն

Հասցեն աղօթք իմ նրմա։

ՎԵՐՋ ԵՐՐՈՐԴ ՀԱՆԴԻՍԻՆ

Կը շարունակուի

ՎՐԻՊԱԿԱՐ ՈՒՂՂԵԼՈՒՐ

Սիալ		Ուղիղ
էջ 71, տող 7 (Ա- Սպասուր)		(Ա- Սպասուրն)
» 73, » 8 շամբիւութեան		շամբրութիւն

digitised by A.R.A.R.@